

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____2018 ԹՎԱԿԱՆ N _ Ա

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ
ՀԱՆՁՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) ամրացված՝ Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող՝ 251600000 ՀՀ դրամ գնահատված արժեքով և 2769.4 քառ. մետր ներքին մակերեսով ուսումնական մասնաշենքերը և 3057.346 հազ. դրամ կադաստրային արժեքով և 0.208747 հեկտար մակերեսով հողատարածքը՝ անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատությանը (այսուհետ՝ Համալսարան)՝ նպատակային նշանակության օգտագործման համար:

2. Սահմանել, որ Համալսարանը պարտավորվում է իր կողմից ներկայացված ներդրումային ծրագրով առաջիկա 5 տարում (2019-2023թ.թ.) իրականացնելու 230.0 մլն.դրամի ներդրումներ՝ ուսումնական մասնաշենքերի վերանորոգման և տարածքների բարեկարգման համար:

3. Կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, երկամսյա ժամկետում Համալսարանի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված տարածքի անհատույց օգտագործման մասին պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ դրանում նախատեսելով, որ՝

1) Համալսարանը պարտավոր է իր կողմից ներկայացված ներդրումային ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը հավաստող համապատասխան փաստաթղթերը ներկայացնել կոմիտե՝ յուրաքանչյուր տարվա ավարտից հետո 15-օրյա ժամկետում.

2) պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող գույքային իրավունքների պետական գրանցման ծախսերը ենթակա են իրականացման Համալսարանի միջոցների հաշվին.

3) սույն կետի 1-ին ենթակետում նշված փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում Համալսարանի հետ կնքված պայմանագիրը ենթակա է լուծման:

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՀԱՆՁՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Անհրաժեշտությունը

ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի N 1049-Ն որոշման 1-ին կետով Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող, 110752.4 հազ. դրամ սկզբնական արժեքով և 3046.34 քառ. մետր արտաքին մակերեսով ուսումնական մասնաշենքերը և 0.208747 հեկտար մակերեսով հողատարածքը (30.03.2012 թ. N 30032012-01-0292 անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի գրանցման վկայական) հետ է վերցվել «Վ. Դավթյանի անվան N 149 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունից /այսուհետ՝ կազմակերպություն/ (պետական գրանցման համարը՝ 264.210.06121) և թողնվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը:

Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության Ուսմունք դպրոցի հետագա զարգացման ծրագրից ելնելով Համալսարանը կրթության և գիտության նախարարություն է դիմել նշված տարածքը անժամկետ, անհատույց տրամադրելու խնդրանքով՝ ներկայացնելով անշարժ գույքի բարելավմանն ուղղված ներդրումային ծրագիր:

Ընթացիկ իրավիճակը

Կազմակերպությանն ամրացված Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող անշարժ գույքի կազմից ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի «Վ. Դավթյանի անվան N 149 ավագ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված գույքի մի մասը հետ վերցնելու և այն Ռուս-Հայկական համալսարանում ներդնելու մասին» N1402-Ա որոշման համաձայն հետ է վերցվել 4062.1 քառ. մետր մակերեսով շենքերը և 10057,95 քառ.մետր հողատարածքը և անհատույց օգտագործման իրավունքով հանձնվել է Համալսարանին՝ Կազմակերպությանը թողնելով 3046.34 քառ. մետր արտաքին մակերեսով երկու մասնաշենքերը և 0.208747 հեկտար մակերեսով հողատարածքը:

Նշված երկու մասնաշենքերն երկու կողմերից միջանցքներով կապված են եղել նախկինում Համալսարանին հանձնված մասնաշենքերին: Կազմակերպությանն ամրացված մասնաշենքերը չունեն կենտրոնական մուտք, ջեռուցման համակարգ և գտնվում են անմխիթար վիճակում:

Կարգավորման նպատակ

Նկատի ունենալով վերոնշվածը՝ երկու մասնաշենքը այլ կազմակերպություն-ներին անհատույց կամ վարձակալությանը հանձնելու դեպքում կխաթարվի Համալսարանի Ուսմունք դպրոցի բնականոն գործունեությունը: Դպրոցը հիմնադրվել է 2009-2010 ուսուումնական տարում և ունեցել ընդամենը 14 սովորող, իսկ 2017-2018 թ.թ.

ուսումնական տարում սովորողների թիվը 218 է: Դպրոցն իր գործունեությունն իրականացնում է վերոնշված որոշման համաձայն տրված հինգ մասնաշենքերում: Համալսարանը նշված մասնաշենքերի կապիտալ վերանորոգման, ինչպես նաև տարածքի բարեկարգման և ֆուտբոլային դաշտի ու հանդերձարանի կառուցման նպատակով ներդրել է 266029310 /երկու հարյուր վաթսուներեք միլիոն քսանինը հազար երեք հարյուր տասը/ դրամ և նախատեսվում է մինչև 2018թ. ավարտը վերանորոգել մոտ երկու մասնաշենք: Դպրոցը 2009թ. հարկային պարտավորությունների գծով ՀՀ պետական բյուջե է փոխանցել 1265446 /մեկ միլիոն երկու հարյուր վաթսուներեք հազար չորս հարյուր քառասուն վեց հազար/ դրամ, իսկ 2017թ-ին՝ 27690300 /քսանյոթ միլիոն վեց հարյուր իննսուն հազար երեք հարյուր/ դրամ գումար:

Համալսարանին հանձնված հինգ մասնաշենքը և Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին հանձնված երկու մասնաշենքը հանդիսանում են մեկ գույքային միավոր և դրանց աղճատումն՝ այլ հիմնարկի տրամադրման պարագայում կխոչընդոտի դպրոցի բնականոն գործունեությանը և արգելք կհանդիսանա դպրոցի հետագա ընդլայնմանն ու զարգացմանը: Համալսարանը պատրաստակամ է տարածքները հանձնելու դեպքում այն վերանորոգել և օգտագործել ուսումնական նպատակների համար:

Կրթության և գիտության նախարարությունն առաջարկում է Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող՝ 251600000 ՀՀ դրամ գնահատված արժեքով /գնահատվել է «ԿՈՍՏ ԿՈՆՍԱԼՏ» ՍՊ ընկերության աշխատակից Լևոն Կոստանյանի կողմից, գնահատման վկայական 2003թ. ԱԳԳ180/ և 2769.4 քառ. մետր ներքին մակերեսով ուսումնական մասնաշենքերը և 0.208747 հեկտար մակերեսով հողատարածքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով հանձնել համալսարանին:

Ակնկալվող արդյունքը

Վերանորոգված և ժամանակակից սարքավորումներով համալրված շենքում կիրականացվի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի սպասվում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողությունների և առաջարկությունների մասին

N/ N	Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1	ՀՀ արդարադատության նախարարություն 2018-03-16 N01/14/4660-18	Առաջարկում է՝ Որոշման նախագծում նշել ՀՀ կառավարության և ՌԴ կառավարության միջև կնքված համաձայնագրի անվանումը, մասնավորապես՝ «14.05.2015 թվականին» բառերն անհրաժեշտ է փոխարինել «2015 թվականի մայիսի 14-ին» բառերով:	-	Համաձայնագրի հիշատակումը նախագծից հանվել է:
2	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն 2018-01-26 N01/15.2/421-18	<p>Առաջարկում է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատությունը պարտավոր է իր կողմից ներկայացված ծրագրով նախատեսված աշխատանքների կատարումը հավաստող համապատասխան փաստաթղթերը ներկայացնել ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 15-օրյա ժամկետում: Նույն կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ վերը նշված փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելու դեպքում Համալսարանի հետ կնքված անհատույց օգտագործման պայմանագիրն ենթակա է լուծման:</p> <p>Վերը նշվածի առումով հարկ է նշել, որ Նախագծին կից ներկայացված գործարար ծրագրով որևէ չափելի ցուցանիշ նշված չէ, այսինքն՝ պարզ չէ, թե ծրագրի շրջանակներում տարեկան կտրվածքով ինչքան ներդրումներ են կատարվելու, ինչքան աշխատատեղեր են ստեղծվելու և այլն: Մեր կարծիքով՝ նշված ցուցանիշների բացակա-յությամբ գործարար ծրագրի իրականացման ընթացքի նկատմամբ վերահսկողություն իրականացնել հնարավոր չէ:</p>	Ընդունվել է	Որոշման նախագիծը լրամշակվել է, որին կցվել է ներդրումային ծրագիրը:
3	ՀՀ ֆինանսների նախարարություն	Առաջարկում է 1. ՀՀ կառավարության 24.08.2017թ.	1.Ընդունվել	1.Առաջարկին

	<p>2018-02-02 01/9-5/1686-18</p>	<p>N 1049-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) 13-րդ կետով ՀՀ կրթության և գիտության նախարարին և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին հանձնարարվել էր Որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում ՀՀ կառավարություն ներկայացնել առաջարկություն Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող անշարժ գույքի հետագա օգտագործման վերաբերյալ: Այս կապակցությամբ Նախարարության կողմից ներկայացվել է «Անհատույց օգտագործման իրավունքով գույք հանձնելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (այսուհետ՝ Նախագիծ), որով նախատեսվում է «ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող՝ 110,752.4 հազ. դրամ սկզբնական արժեքով և 3046.34 քառ. մետր արտաքին մակերեսով ուսումնական մասնաշենքերը և 0.208747 հեկտար մակերեսով հողատարածքը (այսուհետ՝ Գույք) անհատույց օգտագործման իրավունքով հանձնել Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատությանը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ նպատակային նշանակության օգտագործման համար: Սակայն Նախագծով պետական գույքի կառավարման արդյունավետության տեսանկյունից չեն ներկայացվել Գույքը Կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու նպատակահարմարության և անհրաժեշտության, ինչպես նաև «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պետական գույքի օգտագործման այլ գործիքների կիրառման և գույքի օգտագործումը պետական կառավարման մարմինների կարիքների համար օգտագործման աննպատակահարմարության վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ: Ընդամենը Նախագծի հիմնավորումներում նշվել է, որ Կազմակերպությունը դիմել է Նախարարությանը Գույքը տրամադրելու խնդրանքով՝ ներկայացնելով անշարժ գույքի բարելավմանն ուղղված գործարար ծրագիր: Ընդ որում գործարար</p>	<p>է</p>	<p>համապատասխան լրամշակվել է տեղեկանք հիմնավորումը, որի մեջ ներառվել է Համալսարանին անհատույց օգտագործման իրավունքով տրվող տարածքների անհրաժեշտության մասին: Որոշման նախագծից հանվել է գործարար ծրագիրը, նախատեսվել է յուրաքանչյուր տարվա ներդրումների չափը և դրան համապատասխան աշխատանքները ըստ տարիների և եռամսյակների արտացոլվի Կոմիտեի հետ կնքվող ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման իրավունքի պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվա-ծում: Միաժամանակ Համաձայնագրի հիշատակումը նախագծից հանվել է:</p>
--	--------------------------------------	--	----------	--

<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 2018-04-23 01/9-5/7438-18</p>	<p>ծրագրում չի նշվում, թե որքան է կազմում ներդրումների չափը:</p> <p>2. Նախագծի նախաբանում հղում է կատարվում ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կնքված համաձայնագրի 6-րդ հոդվածին, մինչդեռ չի նշվում համաձայնագրի ընդունման ամիսը, ամսաթիվը և տարեթիվը:</p> <p>3. Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման 1-ին կետով հաստատված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգի (այսուհետ՝ Կարգ) 2-րդ կետի 2-րդ ենթակետի՝ անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներառում է նաև անհատույց օգտագործման տրամադրվող անշարժ գույքի գնահատված արժեքը՝ ըստ գնահատման վերաբերյալ հաշվետվության, սակայն Նախագծի 1-ին կետում նշված է Գույքի սկզբնական արժեքը:</p> <p>4. Համաձայն Կարգի 5-րդ կետի, կազմակերպություններին անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է համապատասխան ոլորտի կամ տարածաշրջանի զարգացմանն ուղղված՝ սույն որոշման 2.1-ին կետով նախատեսված ծրագրի օրինակելի ձևին համապատասխանող ծրագրի առկայության դեպքում՝ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ժամկետով, իսկ Կազմակերպության կողմից ներկայացված ծրագրում, որպես իրականացման ժամկետ նշվել է 2018-2023թթ.: Սակայն Նախագծում չի նշվել, թե ինչ ժամկետով է գույքը տրամադրվում Կազմակերպությանը:</p> <p>Ելնելով վերոգրյալից Նախագծին հնարավոր կլինի անդրադառնալ Նախագծի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ համապատասխան հիմնավորումների և վերը նշված դիտողություններին համապատասխան խմբագրված Նախագծի առկայության պարագայում:</p> <p>Առաջարկում է</p> <p>1. Նախագծով նախատեսվում է «ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված Երևան</p>	<p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p> <p>4.Ընդունվել է</p> <p>1.Ընդունվել է</p>	<p>2. Համաձայնագրի հիշատակումը նախագծից հանվել է:</p> <p>3.Որոշման նախագծում տրամադրվող գույքի սկզբնական արժեքը փոխարինվել է «ԿՈՍՍ ԿՈՆՍԱԼՏ» ՍՊԸ կողմից գնահատված արժեքով:</p> <p>4.Որոշման նախագիծը ամբողջությամբ լրամշակվել է</p> <p>1.Որոշման նախագծի հիմնավորման մեջ կատարվել է լրացում, նկա-</p>
---	---	---	--

	<p>քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող՝ 251,600.0 հազ. դրամ գնահատված արժեքով և 2769.4 քառ. մետր ներքին մակերեսով ուսումնական մասնաշենքերը և 0.208747 հեկտար մակերեսով և 3057.3 հազ. դրամ կադաստրային արժեքով հողատարածքը (այսուհետ՝ Գույք) անհատույց օգտագործման իրավունքով հանձնել Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատությանը (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ նպատակային նշանակության օգտագործման համար և վերջինիս կողմից 5 տարվա ընթացքում 380.0 մլն դրամ ներդրում իրականացնելու և գույքը կապիտալ վերանորոգելու ու տարածքը բարեկարգելու նպատակով:</p> <p>Այս կապակցությամբ պետական գույքի կառավարման արդյունավետության տեսանկյունից չէին ներկայացվել Գույքը Կազմակերպությանը անհատույց օգտագործման իրավունքով հանձնելու նպատակահարմարության և անհրաժեշտության, ինչպես նաև «Պետական գույքի կառավարման մասին» ՀՀ օրենքով նախատեսված պետական գույքի օգտագործման այլ գործիքների (վարձակալություն, օտարում) կիրառման և գույքի օգտագործումը պետական կառավարման մարմինների կարիքների համար օգտագործման աննպատակահարմարության վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ: Վերը նշվածի կապակցությամբ Նախագծի հիմնավորումներում ընդամենը նշվել է Կազմակերպությունում սովորողների թվաքանակի ավելացման և ՀՀ պետական բյուջե Կազմակերպության կողմից վճարված հարկային պարտավորությունների մասին տեղեկատվություն:</p> <p>2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշման 1-ին կետով հաստատված պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի անհատույց օգտագործման տրամադրման կարգի 5-րդ կետը, համաձայն որի կազմակերպություններին անշարժ գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում է համապատասխան ոլորտի կամ տարածաշրջանի</p>	<p>2.Ընդունվել է</p>	<p>րագրելով նշված երկու մասնաշենքերը այլ կազմակերպություններ ի անհատույց կամ վարձակալությամբ հանձնելու աննպատակահարմարության վերաբերյալ:</p> <p>2.Որոշման նախագծի առաջին կետը լրամշակվել է և լրացվել է «անժամկետ» բառը:Որոշման նախագծից հանվել է գործարար</p>
--	--	----------------------	---

		<p>զարգացմանն ուղղված՝ սույն որոշման 2.1-ին կետով նախատեսված ծրագրի օրինակելի ձևին համապատասխանող ծրագրի առկայության դեպքում՝ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ժամկետով, առաջարկվել էր Նախագծում նշել նաև գույքի անհատույց օգտագործման իրավունքով տրամադրման ժամկետը:</p> <p>Այս կապակցությամբ Նախագծում կրկին չի նշվել, թե ինչ ժամկետով է գույքը տրամադրվում Կազմակերպությանը և «Ծրագրի իրականացման ժամկետները» բաժինը նախկինում ներկայացված ծրագրից հանվել է:</p>	<p>ծրագիրը, նախատեսվել է յուրաքանչյուր տարվա ներդրումների չափը և դրան համապատասխան աշխատանքները ըստ տարիների և եռամսյակների արտացոլվի Կոմիտեի հետ կնքված ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման իրավունքի պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածում:</p>
4	<p>ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2018-02-02 01/9-5/1686-18</p>	<p>Առաջարկում է Ի կատարումն ՀՀ վարչապետի 13.12.2017թ. թիվ 02/14.9/27249-17 հանձնարարականի համալիր սոցիալական ծառայություններ տրամադրող կենտրոնի կազմակերպման համար ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանում տարածք տրամադրելու վերաբերյալ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունն առաջարկել է նախարարությանը տրամադրել Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող շենքի 1-ին հարկի տարածքը:</p>	<p>1.Չի ընդունվում</p> <p>1.Համալսարանին նախկինում հանձնված հինգ մասնա-շենքը և ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը հանձնված երկու մասնաշենքերը հանդիսանում են մեկ գույքային միավոր և դրանց ադճատումն՝ այլ հիմնարկի տրամադրման պարագայում կխոչընդոտի դպրոցի բնականոն գործունեությանը և արգելք կհանդիսանա դպրոցի հետագա ընդլայնմանն ու</p>

		<p>ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի N 1402-Ա որոշմամբ Երևան քաղաքի Էմինի 4 հասցեում գտնվող անշարժ գույքից 4062,1 քառ.մետր արտաքին և 3692,8 քառ.մետր ներքին մակերեսներով մասնաշենքերը և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 10057,95 քառ.մետր մակերեսով հողամասն անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հատկացվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատությանը և հաշվի առնելով, որ սահմանված ժամկետում համալսարանը չէր կատարել ստանձնած ներդրումային պարտավորությունները, ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 23-ի N 650-Ա որոշմամբ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության կողմից ստանձնած 384,5 մլն. ՀՀ դրամի ներդրումներ կատարելու պարտավորության ժամկետը երկարացվել է ևս 3 տարով (մինչև 2019 թվականը):</p> <p>Ներկայացված ՀՀ կառավարության որոշման նախագծի քննարկմանն անդրադառնալ Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության կողմից ստանձնած ներդրումներն ամբողջությամբ կատարելուց հետո, միաժամանակ կարևորելով պետական մարմիններին աշխատանքային տարածքով ապահովելու խնդիրը, համալսարանին անհատույց օգտագործման տրամադրել միայն Երևան քաղաքի Հ. Էմինի նրբանցք 4 հասցեում գտնվող շենքի նկուղային և 2-րդ հարկերը /բացի ՀՀ աշխատանքի և սոցիալական</p>	<p>Ընդունվում է</p> <p>2ի ընդունվում</p>	<p>զարգացմանը:</p> <p>2007 թվականի նոյեմբերի 29-ի N 1402-Ա որոշմամբ Երևան քաղաքի Էմինի 4 հասցեում գտնվող անշարժ գույքից 4062,1 քառ.մետր արտաքին և 3692,8 քառ.մետր ներքին մակերեսներով մասնաշենքերը և դրանց զբաղեցրած, օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ 10057,95 քառ.մետր մակերեսով հողամասն անհատույց, անժամկետ օգտագործման իրավունքով հատկացվել է Համալսարանին, որում Համալսարանն առաջիկա 5 տարում պետք է իրակա-նացներ վերա-նորոգման աշխատանքներ, սակայն համապատասխան ֆինանսավորման բացակայության արդյունքում ներդրումային ժամկետները երկարացվել են մինչև 2019թ.: Համալսարանը</p>
--	--	--	--	---

		<p>հարցերի նախարարությանը հասկացվող 1-ին հարկի տարածքից/:</p> <p>Հարկ է նշել նաև, որ համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի՝ ՀՀ կառավարության որոշման նախագծում պետք է նշվի անշարժ գույքի գնահատված արժեքը, իսկ 5-րդ և 6.4-րդ կետերի համաձայն պետական սեփականություն հանդիսացող տարածքներն այլ կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրվում են որևէ ոլորտի կամ տարածաշրջանի զարգացմանն ուղղված (ծրագրի օրինակելի ձևին համապատասխանող) ծրագրի առկայության դեպքում՝ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ժամկետով, եթե կազմակերպության կողմից ներկայացվել է անշարժ գույքի բարելավմանն ուղղված ներդրումային ծրագիր, որը պարունակում է առաջարկվող ներդրումների (ներառյալ՝ անշարժ գույքի վերանորոգման, շարժական գույքով և սարքավորումներով հագեցման, օգտագործման նպատակների վերաբերյալ) նկարագրությունը, ծավալը (ՀՀ դրամով արտահայտված) ու ակնկալվող արդյունքները և կազմակերպության կողմից առաջարկվող ներդրումային ծրագիրը համապատասխանում է պետություն-մասնավոր հատված համագործակցության սկզբունքի հիման վրա ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած ծրագրին, ուստի առաջարկում եմ որոշման նախագիծը մշակելիս այն համապատասխանեցնել ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 17-ի N 304-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին:</p>	<p>պարտավորվել էր մինչև 2019 թ. ավարտը ներդնել 384500000.0 դրամ, սակայն մինչև 2017 թ. Ավարտը ներդրել է 266029310 դրամ և նախատեսվել է 2018թ. սկսել շինարարական աշխատանքները և վերանորոգել մոտ երկու մասնաշենք և մինչև 2019թ. ավարտը կատարել ներդրումային պարտավորությունները:</p> <p>Հիմք ընդունելով 14.05.2015 թ կնքված համաձայնագրի 6-րդ հոդվածը և ՀՀ կառավարության 2011 թ. փետրվարի 17-ի N 304-Ն որոշման 1-ին կետի համաձայն հիմնադիրն է որոշում թե ինչ կարգով կարող է իր սեփական գույքը տրամադրել անհատույց օգտագործման: Սույն որոշման նախագծում նշվել է ներդրումների մասին այն նկատառումներից ելնելով, որ Համալսարանը պատրաստակա</p>
--	--	---	---

				մ է նշված հասցեում գտնվող գույքը իր հնարավորության սահմաններում, իրականացնել ներդրումներ և տվյալ հասցեում ունենալ մեկ ընդհանուր կրթական համալիր:
	<p>« կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2018-04-13 01/22.2/2608-18</p>	<p>Առաջարկում է</p> <p>1) Որոշման նախագծի 1-ին կետից հանել <(30.03.2012թ. N30032012-01-0292 անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի գրանցման վկայական)> բառերը,</p> <p>2) Որոշման նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետում <<ամալսարանի> բառից առաջ լրացնել <սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում> բառերը,</p> <p>3) Որոշման նախագծի 3-րդ կետում <որ> բառից հետո լրացնել <պայմանագրի նոտարական վավերացման և> բառերը:</p>	<p>1)Ընդունվել է</p> <p>2)Ընդունվել է</p> <p>3) Ընդունվել է</p>	<p>1.Որոշման նախագծի 1-ին կետից հանվել է <(30.03.2012թ. N30032012-01-0292 անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքի գրանցման վկայական)> բառերը,</p> <p>2) Որոշման նախագծի 2-րդ և 3-րդ կետերը միավորվել են և շարադրվել այլ խմբագրությամբ .</p> <p>3) Որոշման նախագծի 2-րդ և 3-րդ կետերը միավորվել են</p>
5	<p>« կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե</p>	<p>Առաջարկում է Որոշման նախագծի 1-ին կետում նշված <<3046.34 քառ. մետր արտաքին մակերեսով>> բառերը փոխարինել <<2769.4 քառ. մետր ներքին մակերեսով բառերով>>:</p>	Ընդունվել է	<p>Առաջարկին համապատասխան «3046.34 քառ. մետր արտաքին մակերեսով» բառերը փոխարինելվել է «2769.4 քառ. մետր ներքին մակերեսով բառերով» բառերով:</p>

6.	Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարան 2018-08-09 N 01-342	Առաջարկում է նախագծի 3-րդ կետի 1-ին ենթակետի «կիսամյակի» բառը փոխարինել «տարվա» բառով:	Ընդունվել է	Առաջարկին համապատասխան 3-րդ կետի 1-ին ենթակետի «կիսամյակի» բառը փոխարինվել է «տարվա» բառով:
	ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն 2018-08-18 01/22.2/4879-18	<p>Առաջարկում է</p> <p>1) Որոշման նախագծի 2-րդ կետում «հազ.դրամ» բառերը փոխարինել «մլն.դրամ» բառերով,</p> <p>2) Որոշման նախագծի 3-րդ կետում «Կոմիտեի նախագահին՝» բառերից հետո լրացնել «սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, երկամսյա ժամկետում,» բառերը:</p> <p>3) Միաժամանակ առաջարկում եմ Որոշման նախագծի 2-րդ կետով ստանձնած ներդրումային պարտավորությունների ուղղվածությունը համապատասխանեցնել Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարան բարձրագույն մասնագիտական կրթության պետական ուսումնական հաստատության կողմից ներկայացված ներդրումային ծրագրի 2.3 կետում նշված միջոցառումներին:</p>	<p>1.Ընդունվել է</p> <p>2.Ընդունվել է</p> <p>3.Ընդունվել է</p>	<p>1. Որոշման նախագծի 2-րդ կետում «հազ. դրամ» բառերը փոխարինվել է «մլն.դրամ» բառերով:</p> <p>2.Որոշման նախագծի 3-րդ կետում կատարվել է լրացում:</p> <p>3.Առաջարկին համապատասխան լրամշակվել է որոշման նախագծի 2-րդ կետում նշված միջոցառումները՝ այն համապատասխանեցնելով ներդրումային պարտավորություններին</p>